ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայցվորը հայցադիմումը ներկայացնելու պահին վճարել է օրենքով սահմանված պետական տուրքի գումարը, ուստի պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.12-րդ, 362-րդ հոդվածներով, դատարանը

ՎՃՌԵՑ

«Սուսմետ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Գեղաշենի Ռ.Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպության՝ ԿՄԳՌՍԱՄԴ_ԳՀ_ԱՇՁԲ_22/01 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 04.08.2022 թվականի թիվ 2 արձանագրությունը դադարեցնելու և հանձնաժողովին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Սույն վճիռը մտել է օրինական ուժի մեջ ____ _____2022թվականին:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ